Օրինակ երդման Հայրապետին եւ կամ փոխանորդին իւրոյ։

ԳԼՈՒԽ ԼԸ.

Ես Սեղբեստրոս շնորհօքն յԱստուծոյ արք Եպիսկոպոս աղձնու, խոստովանիմ առաջի Աստուծոյ և առաջի ձեր եղբարք, և երդնում 'ի վերայ Սուրբ կտակարանիս, որ եմ ծնունդ սեպհական ազգէն հայոց հաւատացեալ 'ի Քրիստոս աւանդութեամբն հայաստանեաց սուրբ եկեղեցւոյ շնորհօքն Աստուծոյ արք Եպիսկոպոս աղձնու և փոխանորդ ծայրագոյն Հայրապետին և եղբայրակից իմոց Եպիսկոպոսաց ամենայն հայոց խոստանամ առաջի Աստուծոյ և ձեր, զի կալով մնասցեմ հաստատուն 'ի վերայ այսմ հաւատոյս և սիրոյ 'ի վերայ ազգին իմոյ, և հնազանդ Օրինացն կարգադրութեանն տանն հայոց զամենայն աւուրս կենաց իմոց։

Վկայեմք, որ երդմնեաց Սեղբեստրոս արք և ձեռնադրեաց. Եպիսկոպոս. }○
Շմաւօն իշխան. . ○
Մաղաքիայ Գծագիր ○

Օրինակ երդման Տանուտէրաց։

ԳԼՈՒԽ ԼԹ.

Ես Միքայէլ 'ի գեղջէն Մեղրու խոստովանիմ առաջի յԱստուծոյ և առաջի ձեր եղբարք,